

Յովհաննու 14:1-3 (John 14:1-3)

«Վաղը Ապրելու»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 09.12.99

Հանեցէ՛ք բանալ Աստուածաշունչը Յովհաննու 14:1էն - 3 - ֆիչ ետք պիտի կարդանք:

Արդեօք տեղական լուրերուն մտիկ կ'ընէ՞ք: Գրեթէ ամէն օր կը լսենք թէ բոլոր computerները պիտի դադրին - Y2Kին - Յունուար 1, 2000 թուականին: Շատեր կը գուշակեն թէ աշխարհի վերջը պիտի գայ մեծ աղէտով:

Շատ Քրիստոնեաներ կը խորհին թէ Յիսուս պիտի գայ 2000 թուականին եւ թէ Աստուած պիտի դատէ աշխարհը: Կարգ մը հաւատացեալներ արդէն ծախած են իրենց տուները եւ մեկնած դէպի լեռները:

Յիսուս այսպէս կ'ըսէ երբ կը խօսի Իր գալուստին մասին (Մարկոս 13:32) *«Իսկ այն օրուան ու ժամուն համար մէ'կը չի գիտեր, ո'չ երկինքի մէջ եղող հրեշտակները եւ ո'չ Որդին. հապա՛ միայն Հայրը»:* Ոեւէ մէկը չկրնար գուշակել Յիսուսի գալուստը, հապա միայն Աստուած:

Աստուածաշունչը որոշապէս կը ցուցընէ թէ Յիսուս կրկին պիտի գայ. բայց յստակ կերպով կը բացատրէ թէ մենք հաւատացեալներս պէտք է պատրաստ ըլլանք Տէրը դիմաւորելու եւ հոգ չընենք թէ երբ է այս ելոյթը:

Կարդանք Յովհաննու 14:1էն-3 *«Սրտերնիդ չխոռովի. Աստուծոյ հաւատացէ՛ք, Ինծի ալ հաւատացէ՛ք: Իմ Հօրս տունը շատ բընակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի՝ 'Հիմա կ'երթամ, որ ձեզի տեղ պատրաստեմ': Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն պիտի գամ եւ ձեզ ֆովս առնեմ, որպէս զի ո'ւր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք»:*

Յովհաննու 14րդ գլուխը կը ներկայացնէ Յիսուսի վերջին խօսքերը, երբ կը մօտենային Իր վերջին օրերը խաչելութենէ առաջ: Յիսուս կը պատրաստէր Իր աշակերտները Իր բաժանման նկատմամբ: Հոս կը տեսնենք թէ աշակերտները շուարած են եւ անորոշ՝ ապագային նկատմամբ:

Յիսուս կ'ըսէ աշակերտներուն, նաեւ մեզի, *«Սրտերնիդ չխոռովի»* – ձեզի տեղ կայ երկինքի մէջ Աստուծոյ հոյ, եւ ես կրկին պիտի գամ: *«Աստուծոյ հաւատացէ՛ք, Ինձի ալ հաւատացէ՛ք»:*

Այս խօսքերը մեր յարուցեալ Փրկչին խոսքերն են, որ մահուան յաղթեց եւ կրկին պիտի գայ: Այս խօսքերը մեր Տէրոջ խոսքերն են Ան կը տիրէ անցեալ, ներկայ եւ ապագային վրայ:

Շատեր մտահոգ են վաղուայ համար: Այսօր կարելի է դուն ալ հարց կուտաս ապագային նկատմամբ: Ին՞չ պիտի պատահի 2000 թուին: Ին՞չ պիտի պատահի տնտեսութեան: Ին՞չ պիտի ըլլայ իմ ընտանիքիս վիճակը: Ին՞չ պիտի տեսնեմ – ուախութիւն՞ թէ տիրութիւն – հիւանդութիւն՞ թէ առողջութիւն – մա՞հ թէ կեանք: Պիտի կրնամ՞ դիմագրաւել վաղը երբ այսօր հազիւ կրնամ տոկալ:

Յիսուս ըսաւ (Մատթէոս 6:11) *«Մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի տուր»:* Որովհետեւ Աստուած կը հոգայ մեր ամէն օրուայ պետքերը:

Դաւիթի կը միանանք ըսելով (Սաղմոս 23:4) *«Թէեւ մահուան շուրթի ձորին մէջ ալ պտըտիմ, չարէն պիտի չվախնամ՝ վասն զի դուն Ինձի հետ ես»:*

Յիսուս ըսաւ (Մատթէոս 28:20) *«Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը»:*

*«Աստուծոյ հաւատացէ՛ք, Ինձի ալ հաւատացէ՛ք»:*

Ուրեմն, մենք այսպէս ապրելու ենք, երբ կը սպասենք Յիսուսի գալուստին: Քաջալերուած – վստահ – Իմ խաղաղութիւնով լի – այս չար աշխարհին մէջ:

Աստուածաշունչը մեզ կը փառալերէ որ նորոգենք մեր հաւատքը Յիսուսի վրայ - վերանորոգենք մեր սէրն ու նուիրումը Յիսուսի հանդէպ:

Աղօթեմք - Տէրոջ յանձնէ անորոշ կամ կասկածոտ վիճակդ - եւ վստահ եղիր որ Ան քեզ պիտի հոգայ: Տէր Յիսուս, օգնէ մեզի որ լման Քեզի վստահինք: Այո, կը յիշեմք ինչպէս հոգ տարիր մեզի անցեալին, եւ գիտեմք որ մեզ կը սիրես, եւ թէ նորէն պիտի գաս - Օգնէ որ մենք ալ Քեզ աւելի սիրենք եւ ծառայենք լիովին: